

ՀՐԱՉՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ

1961 թ. նոյեմբերի 6-ին, երկարատև ու ծանր հիվանդությունից հետո, վախճանվեց Սովետական Միության ժողովրդական արտիստ Հրաչյա Ներսիսյանը։ Հայ ժողովուրդը, սովետական թատրոնն ու կինոարվեստը մեծ և անփոխարինելի կորուստ ունեցան. այլևս չկա մեր Միության ժողովուրդների կողմից խորապես սիրված ու գնահատված մեծանուն արվեստագետը, որի համբավը արդեն վաղուց դուրս էր եկել հայ իրականության սահմաններից։

Հրաչյա Ներսիսյանը ծնվել է 1895 թ., Պոլսի մոտ գտնվող Նիկոմեդիայում։ Սրա առաջին քայլերը թատերական արվեստի բնագավառում զուգադի-

պում են առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած մոայլ տարիներին։ Բնությունից շռայլորեն օժտված, իր կյանքը իսկական, մեծ արվեստին նվիրաբերելու ձգտումով տոգորված երիտասարդ երաժշտուհի կատարելագործել իր բնատուր ձիրքը, բոլոր ընդունակություններն ի սպաս դնել իր նոր, վերածնվող հայրենիքի՝ Սովետական Հայաստանի կուլտուրական ծաղկմանը։ Եվ ահա 1922 թ. նա Պոլսից փոխադրվում է Երևան։

Հրաչյա Ներսիսյանը սովետահայ թատրոնի եռանդուն և ամենաիրաշխոր ստեղծողներից մեկն էր, նրա բեմի մեծատաղանդ վարպետը, որի կյանքն ու շողշողուն արվեստը թատերական մի քանի սերունդ են դաստիարակել։ Մոտ յառասուն տարի բացառիկ եռանդով ու նվիրվածությամբ նա ծառայել է մեր թատրոնին՝ կերտելով շուրջ 130 կերպարներ։ Մեծ դերասանը իրեն հատուկ վարպետությամբ ու ներքին ավյունով հանդես է եկել ինչպես հայ, այնպես էլ ռուս և եվրոպական կլասիկ ու ժամանակակից դրամատուրգների պիեսների բեմադրություններում։ Բաղդասար աղբարի, Էլիզբարովի, Պեպոյի, Պահլավունու, Գեորգ Մարդպետունու, Կոշիկինի («Լյուբով Յարովայա»), Վերշինինի («Զրահագնացք № 14—69»), Պլատոնի («Պլատոն Կրեչետ»), Պրոտասովի («Կենդանի դիակ»), Օթելլոյի, Մեր-Գրեգորի («Իմ սիրտը լեռներում է») և բազմաթիվ այլ բեմական կերպարների վրա դրոշմված է Հրաչյա Ներսիսյանի հզոր արտիստական տաղանդի ինքնատիպ, անթառամ կնիքը։ Նա խոշոր էքսցենտրիցիայի տեր արվեստագետ էր և իր անզուգական խաղով հավասարապես հմայիչ ու գերող՝ ամենատարբեր դերակատարումների ժամանակ։ Հայ թատրոնի լավագույն տրադիցիաները զուգակցելով արդիականության պահանջներին, Հրաչյա Ներսիսյանը իր արվեստին հաղորդում էր մեծ հնչեղություն. այդ արվեստը մեր ժամանակների ծնունդն էր և նրա փայլուն արձագանքը։

Հրաչյա Ներսիսյանը անգնահատելի ծառայություն է մատուցել հայկական կինոարվեստին, որի հիմնադիրներից մեկն էր նա, ամենաառաջնակարգ դեմքը, էկրանի մեծագույն վարպետը։ Այստեղ էլ բազմակողմանիորեն դրսևորվեց Հրաչյա Ներսիսյանի աննման տաղանդը, նրա ստեղծագործական վիթխարի փորձը։ Ռուստամի, Պեպոյի, Հանես ամու («Սևանի ձկնորսները»), Դավիթ-Բեկի, Էլիզբարովի, Ներսես աղբարի («Տժժիկ») և շատ ուրիշ դերակատարումներ իրենց հատուկ տեղն ունեն սովետական կինեմատոգրաֆիայի պատմության մեջ։

Ժողովրդի հետ սերտորեն կապված, իր մեծ արվեստը ժողովրդին նվիրաբերած հայրենասեր արվեստագետը բարձր գնահատականի է արժանացել Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության կողմից։ Նա պարգևատրվել է Լենինի և Պատվո նշան շքանշաններով ու մեդալներով, այլ կոչումների և կառավարական մրցանակների հետ միասին արժանացել նաև Սովետական Միության ժողովրդական արտիստի բարձր կոչման։

Հրաչյա Ներսիսյանը ժողովրդի կողմից անհունորեն սիրված, անկրկնելի արվեստագետ էր, մեծ սրտի տեր, համեստ ու ազնիվ մարդ։ Նրա անունն ու պայծառ հիշատակը հավերժ կապրի ժողովրդի սրտում։